

Գրքի կողքի կեդրոնը տեղադրուած է արեւելեան կրօնափիլիսոփայութեան մէջ օգտագործուող *մանդալա* (անսկ.՝ Mandala) մը, որ սանսկրիտերէն կը նշանակէ «շրջանակ» եւ կը խորհրդանշէ ողջ աշխարհն ու տիեզերքը: Իսկ կողքի ետեւի երեսին վրայ տեղադրուած է հռչակաւոր Միքէլանջելոյէն (Michelangelo, 1475 – 1564 թ.) որմանկար մը, որ կը գտնուի Վատիկանի մէջ եւ կը ներկայացնէ Ադամի արարումը, ստեղծագործ ու արարիչ Աստուծոյ կողմէ:

Աստուածիմաստութիւն եզրոյթը, թէեւ կազմուած է Հին Դարու (Antiquity) վերջաւորութեան (մ.թ. 2-րդ կամ 3-րդ դարերուն), սակայն նիւթի քննարկումը սկսած է շատ աւելի կանուխ, եւ ունի իր երկար պատմութիւնը: Այս պատճառով ալ ընդարձակ այս նիւթի քննարկումը բաժնած եմ պատմական 5 ժամանակաշրջաններու վրայ՝ Հին Դարէն սկսեալ մինչեւ ժամանակակից շրջանը:

Մաս-3, բաժնի վերջաւորութեան տեղադրուած է լման գլուխ մը, որ կոչուած է «*Հայ Միջնադարու աստուածիմաստութիւնը*» եւ այս առնչութեամբ յիշուած են Միջնադարու հայկական համալսարանները եւ գրքի նիւթին առնչուած ու նշանաւոր հայ փիլիսոփայ-աստուածաբաններ:

Այժմ, համաշխարհայնացումի (Globalization) եւ արուեստական իմացակալութեան (Artificial Intelligence) այս դարուն, կարճ երկու խօսք ժամանակակից *աստուածիմաստութեան* 3 գլխաւոր յատկանիշներուն մասին.-

1. Միտում մը, Աստուծոյ կամ աստուածայինի բնութեան (Եութեան) եւ մարդու փոխ-յարաբերութիւններու մասին՝ շահադիտական քննախօսութիւններ (Discourse)¹⁸⁻⁴⁹ վարելու:
2. Նախասիրութիւն մը, քրիստոնէական աստուածաշունչին մէջ երեւցող ընդհանուր, բայց մանաւանդ յայտնութեան (Revelation) խորհրդապաշտական-ամեղծուածային տարրի հանդէպ:
3. Համոզուածութիւն մը, որ մարդու բնածին կարողութիւնը (մասնաւորապէս՝ ստեղծագործական երեւակայութեան ուժը) հնարաւորութիւն կու տայ կապ հաստատել իրականութեան աւելի բարձր մակարդակներու հետ:

Գիրքը նախատեսուած է, որպէս ուսումնաօժանդակ ձեռնարկ, կրթական ու հոգեւոր բարձրագոյն ուսումնարաններուն ու համալսարաններուն, ինչպէս նաեւ Աստուածիմաստութեան նիւթով հետաքրքրուող բանիմաց ընթերցողներուն համար: Այս իմաստով յոյս ունիմ, որ աշխատասիրութիւնս պիտի ծառայէ իր նպատակին:

Ս. ք.

2024 - Գերմանիա

